ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2015 թվականի N 552 -Ն

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել՝

1) համապատասխանության հայտարարագրի գրանցման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) համապատասխանության սերտիֆիկատի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) համապատասխանության հայտարարագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ձևաթղթերի լրացման կարգերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. մայիսի 27
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
մայիսի 21-ի N 552 -Ն
որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընդունված տեխնիկական կանոնակարգերի պահանջների համապատասխանությունը հավաստող արտադրանքի համապատասխանության հայտարարագրերի (այսուհետ՝ համապատասխանության հայտարարագիր) գրանցման կարգի հետկապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի N 552 -Ն որոշմամբ սահմանված համապատասխանության հայտարարագրի ձևի և դրա՝ նշված որոշման 2-րդ կետով նախատեսված ձևակերպման կանոնների համաձայն կազմված համապատասխանության հայտարարագիրը ենթակա է գրանցման՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում:

3. Համապատասխանության հայտարարագրերը գրանցվում են սերտի-ֆիկացման մարմինների կողմից, որոնք ընդգրկված են Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացման մարմինների ռեեստրում կամ հավատարմագրման ազգային մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմիններ) կողմից: Սերտիֆիկացման մարմինները համապատասխանության հայտարարագրերի գրանցման մասին տեղեկատվությունը երկու աշխատան-քային օրվա ընթացքում տրամադրում են հավատարմագրման ազգային մարմնին:

4. Համապատասխանության հայտարարագրման ժամանակ որպես հայտատու կարող է հանդես գալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը, որն արտադրանք արտադրող կամ արտադրողի լիազոր ներկայացուցիչ կամ դիստրիբյուտոր է (այսուհետ՝ հայտատու):

5. Համապատասխանության հայտարարագիրը և դրան կից՝ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերը գրանցման են ուղարկվում լիազոր մարմիններ՝ ըստ հայտատուի ընտրության:

6. Լիազոր մարմիններում համապատասխանության հայտարարագրի գրանցման համար հայտատուն կամ ուղղակիորեն լիազոր մարմին է ներկայացնում համապատասխանության հայտարարագիրը և դրան կից՝ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, կամ դրանք ուղարկում է փոստային պատվիրված առաքմամբ՝ ներդիր փաստաթղթերի ցուցակով և ստացման մասին ծանուցմամբ:

7. Լիազոր մարմիններում համապատասխանության հայտարարագրերը գրանցվում են «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

8. Համապատասխանության հայտարարագիրն ստորագրվում է հայտատուի կողմից (իրավաբանական անձի համար՝ հայտատու կազմակերպության ղեկավարի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից) և անհրաժեշտության և առկայության դեպքում հաստատվում է կնիքով:

9. Համապատասխանության հայտարարագրին կցվում են հետևյալ փաստաթղթերը, եթե տեխնիկական կանոնակարգերով այլ բան սահմանված չէ՝

1) համապատասխանության հայտարարագրի գրանցման մասին հայտարարություն՝ ստորագրված հայտատուի կողմից.

2) իրավաբանական անձի պետական գրանցումը կամ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության.

3) արտադրանքի ներմուծման դեպքում օտարերկրյա արտադրողի հետ կնքված պայմանագրի պատճենը, որով նախատեսվում է մատակարարվող արտադրանքի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և Հայաստանի Հանրապետության տարածք մատակարարվող արտադրանքի՝ սահմանված պահանջներին անհամապատասխանության համար պատասխանատվությունը (օտարերկրյա արտադրողի ներկայացուցչի համար):

10. Լիազոր մարմիններն ուսումնասիրում են հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ մասնավորապես՝

1) հայտատուի կողմից համապատասխանության հայտարարագրի լրացման ճշտությունն ու լիարժեքությունը.

2) սույն կարգի 9-րդ կետով նախատեսված բոլոր փաստաթղթերի առկայությունը, եթե տեխնիկական կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ.

3) տեխնիկական կանոնակարգի նորմի առկայությունը, որով սահմանվում է, որ տվյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի որոշակի տեսակների համապատասխանությունը կարող է հավաստվել համապատասխանության հայտարարագրերի ընդունմամբ.

4) համապատասխանության հայտարարագիր ընդունած հայտատուի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնցով սահմանվում են հայտատուների շրջանակը՝ արտադրանքների որոշակի տեսակների համար:

11. Սույն կարգի 10-րդ կետի համաձայն հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով լիազոր մարմինները հայտարարագրի՝ գրանցման դիմելու օրվանից

հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ համապատասխանության հայտարարագիրը գրանցում են կամ պատճառաբանված որոշմամբ մերժում են հայտը:

12. Համապատասխանության հայտարարագրի գրանցման մերժման մասին ծանուցումը գրավոր ուղարկվում է հայտատուին՝ փոստային պատվիրված առաքմամբ՝ ստանալու մասին ծանուցմամբ, կամ հայտատուին առձեռն հանձնելու միջոցով:

13. Համապատասխանության հայտարարագրի գրանցումը մերժելու հիմքերն են՝

1) հայտատուի կողմից լիազոր մարմիններ գրանցման համար այնպիսի համապատասխանության հայտարարագիր ներկայացնելը, որի հավատարմագրման ոլորտում նման արտադրանք չկա.

2) տեխնիկական կանոնակարգի այն նորմի բացակայությունը, որով սահմանվում է, որ տվյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքների որոշակի տեսակների համապատասխանությունը պետք է հաստատվի համապատասխանության հայտարարագրի ընդունմամբ.

3) համապատասխանության հայտարարագիր ընդունած հայտատուի անհամապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, որով սահմանվում է համապատասխանության հայտարարագիր ընդունող հայտատուների շրջանակը:

14. Եթե հայտին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ դրանք թերի են լրացված, ապա լիազոր մարմինները հայտատուին առաջարկում են 2 աշխատանքային օրվա ընթացքում համալրել այդ ցանկը և վերացնել թերությունները: Սահմանված ժամկետում հայտին կից փաստաթղթերի ցանկը չհամալրելու կամ դրանց լրացման թերությունները չվերացնելու դեպքում հայտը չի գրանցվում:

15. Համապատասխանության հայտարարագիրը համարվում է գրանցված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված

համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում հայտարարագրին գրանցման համար տալու պահից:

16. Փոփոխությունների կատարման անհրաժեշտության դեպքում հայտատուն ընդունում է համապատասխանության նոր հայտարարագիր և սույն կարգի համաձայն գրանցում է այն:

17. Հայտատուի մոտ համապատասխանության հայտարարագրի և դրան կից փաստաթղթերի պահպանման ժամկետները սահմանվում են տեխ-նիկական կանոնակարգերով:

18. Այն դեպքում, երբ տեխնիկական կանոնակարգերով սահմանված չէ հայտատուի մոտ համապատասխանության հայտարարագրի և դրան կից փաստաթղթերի պահպանման ժամկետ, այդ ժամկետը կազմում է 10 տարի՝ գրանցման պահից սկսած:

19. Այն դեպքում, երբ արտադրանքի վրա տարածվում է մի քանի տեխնիկական կանոնակարգերի գործողություն, որոնցով սահմանվում են հայտատուի մոտ համապատասխանության հայտարարագրի և դրան կից փաստաթղթերի պահման տարբեր ժամկետներ, ապա կիրառվում է սահմանված պահման ժամկետներից ամենաերկարը:

20. Լիազոր մարմինների կողմից համապատասխանության հայտարարագրի պատճենի պահման վերաբերյալ պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

21. Համապատասխանության հայտարարագրի գործողությունը կասեցվում, վերականգնվում կամ դադարեցվում է «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Այդ դեպքում տրված համապատասխանության սերտիֆի-կատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում գրանցվում է այն ամսաթիվը, որից սկսած համապատասխանության հայտարարագրի գործողությունը կասեցվում, վերականգնվում կամ դադարեցվում է:

22. Համապատասխանության հայտարարագրի գործողությունը համարվում է կասեցված, վերականգնված կամ դադարեցված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում համապատասխան տվյալների մուտքագրման ամսաթվից սկսած:

23. Հայտատուն համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում գրավոր կամ փոստային պատվիրված առաքմամբ՝ ներդիր փաստաթղթերի ցուցակով և հանձնելու մասին ծանուցմամբ ուղղակիորեն լիազոր մարմիններ է ներկայացնում իր կողմից համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման վերաբերյալ ծանուցում:

24. Հայտատուի կողմից համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման վերաբերյալ ծանուցումը պետք է ստորագրվի և հաստատվի կնիքով (առկայության դեպքում), ունենա ամսաթիվ և ներառի համապատասխանության հայտարարագրի գրանցման համարի վերաբերյալ նշում:

25. Հայտատուի ցանկությամբ, համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման վերաբերյալ ստացված ծանուցման հիման վրա, լիազոր մարմիններն ապահովում են համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման ամսաթվի մուտքագրումը:

26. Հայտատուի ցանկությամբ համապատասխանության հայտարարագրի գործողությունը դադարեցված է համարվում տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում համապատասխան փաստերի մուտքագրման ամսաթվից սկսած:

27. Համապատասխանության հայտարարագիրը, որի գործողությունը դադարեցված է, գործողության դադարեցման վերաբերյալ նշման և գործողության դադարեցման ծանուցման հետ միասին պահպանվում է լիազոր մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

28. Արտադրանքի անվտանգության վրա ազդող արտադրանքի կառուցվածքում կամ հատկանիշներում (կազմում) փոփոխությունների կատարման դեպքում համապատասխանության հայտարարագիր ընդունած հայտատուն ապահովում է արտադրանքի համապատասխանությունն այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է արտադրանքի վրա (անհրաժեշտության դեպքում պետք է ունենալ համապատասխանության լրացուցիչ ապացույցներ), եթե տեխնիկական կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ:

29. Եթե հնարավոր չէ ապահովել համապատասխանությունը, հայտատուն լիազոր մարմիններ է ներկայացնում հայտ համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015
թվականի
մայիսի 21-ի N 552 - Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ (1)
ՀՏԿ (2)

N ՀՀ _____ (3)
ՍԵՐԻԱ _____ **N** _____ (4)

ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ (5)
(գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման վկայագրի գրանցման համարը
և գրանցման ամսաթիվը, ինչպես նաև հավատարմագրման վկայագիր տրամադրած հավատարմագրման մարմնի անվանումը

ՀԱՅՏԱՏՈՒ (6)
(իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները կամ ֆիզիկական անձի հաշվառման համարը, գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը՝ իրավաբանական անձի դեպքում, կամ բնակության վայրի հասցեն՝ ֆիզիկական անձի դեպքում, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն)

ԱՐՏԱԴՐՈՂ (7)
(անվանումը, գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը՝ իրավաբանական անձի և նրա արտադրանքն արտադրող մասնաճյուղերի դեպքում, բնակության վայրի հասցեն՝ ֆիզիկական անձի դեպքում)

ԱՐՏԱԴՐԱՆՔ (8)
(անվանումը, արտադրանքի տեսակը, ապրանքանիշը, մոդելը, արտիկուլը, փաստաթղթի անվանումը և վավերապայմանները, որոնց համապատասխան
արտադրվել է արտադրանքը, կազմակերպության ստանդարտկամ այլ
սերտիֆիկացման օբյեկտի անվանումը (սերիական թողարկում, խմբաքանակ կամ եզակի արտադրանք)

ԵԱՏՄ ԱՏԳԱ ՃԱՇԿԱԳԻՐ (9)

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

ՍԵՐՏԻՖԻԿԱՏԸ ՏՐՎԱԾ Է ՀԻՄԱՆ ՎՐԱ (10)
(Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընդունված տեխնիկական կանոնակարգի (կանոնակարգերի) անվանումը (անվանումներ)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (11)
(փորձարկումների կամ չափումների մասին արձանագրությունները՝ փորձարկման լաբորատորիայի համարը, ամսաթիվը, անվանումը, հավատարմագրման վկայագրի գրանցման համարը և դրագործողության ժամկետը, այլ փաստաթղթեր)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ՍԿՍԱԾ (12)

(13)

ՄԻՆՉԵՎ ՆԵՐԱՌՅԱԼ

Կ.Տ.
ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻ _____

_____

ՂԵԿԱՎԱՐ (լիազորված անձ) (ստորագրությունը) (անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը) (14)

Փորձագետ _____ _____
(ստորագրությունը) (անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը) (15)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
մայիսի 21-ի N 552 - Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ
ՀՏԿ (1)

ՀԱՅՏԱՏՈՒ _____
(անվանումը, իրավաբանական անձի պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձի վերաբերյալ տեղեկություններ, գտնվելու վայրը, այդ թվում՝ գործունեության իրականացման վայրը՝ իրավաբանական անձի համար, բնակության վայրի հասցեն՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձի համար, ինչպես նաև հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն)
(2)

Ի ԴԵՄՍ _____
(համապատասխանության հայտարարագիրն ընդունող հայտատու կազմակերպության ղեկավարի կամ նրա լիազոր ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը) (3)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է, ՈՐ _____
(արտադրանքի անվանումը, արտադրանքի նույնականացման համար անհրաժեշտ տեղեկություն՝
առնվազն արտադրանքի տեսակը, մակնիշը, մոդելը, արտիկուլը, արտադրողի անվանումը,
գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը՝ իրավաբանական անձի և նրա
արտադրանքն արտադրող մասնաճյուղերի դեպքում, կամ բնակության վայրի հասցեն՝ որպես
անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձի դեպքում, այն փաստաթղթի անվանումները
և վավերապայմանները, ըստ որոնց արտադրվել է տվյալ արտադրանքը)
(4)

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է _____
(օրենքով կամ ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված տեխնիկական կանոնակարգի
(կանոնակարգերի) անվանումը (անվանումները)

_____ պահանջներին (5)

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է _____
(փորձարկումների կամ չափումների մասին արձանագրությունները, որոնց վրա նշված է փորձարկման լաբորատորիայի համարը, ամսաթիվը, անվանումը, հավատարմագրման վկայագրի գրանցման համարը և դրա գործողության ժամկետը, այլ փաստաթղթեր՝ ներկայացված հայտատուի կողմից որպես օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության

_____
հիման վրա (6)
որոշմամբ ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապացույց)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ _____
(7)

_____

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է ԳՐԱՆՑՄԱՆ

ԱՄՍԱԹԻՎ _____ **ՄԻՆՉԵՎ** _____ **ՆԵՐԱՌՅԱԼ** (8)

_____ _____

(ստորագրությունը) (հայտատու կազմակերպության ղեկավարի կամ
որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձի
անվան և հայրանվան սկզբնատառերը և ազգանունը)
(9)

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ, ՀՀ N (10)

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ _____
(11)

_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ